ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 52-Լ

«21» 07 2025թ. ք. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների աշխատանքների գնահատման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների աշխատանքի գնահատման չափորոշիչները և գնահատման կարգը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Հաստատել Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների աշխատանքի գնահատման առանձին չափորոշիչներից բխող գործակիցների հաշվարկման կարգը՝ համաձայն Հավելված 2-ի:

3. Սույն հրամանն (այսուհետ՝ Հրաման) ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

Հավելված 1

ՀՀ գլխավոր դատախազի 2025
թվականի հուլիսի 21 -ի
թիվ «52-Լ» հրամանի

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների (այսուհետ՝ դատախազություններ) աշխատանքի գնահատումը կատարվում է տարեկան երկու անգամ՝ հուլիսին (կիսամյակային) և փետրվարին (տարեկան):

2. Դատախազությունների աշխատանքի գնահատումը իրականացվում է՝ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները.

1) պետական և համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը և համայնքին վերջնական դատական ակտով վերականգնված գումարի չափը,

2) քրեական վարույթներով, ինչպես նաև դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքին, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման գումարի չափը,

3) ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվը,

4) ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռների թիվը:

3. Սույն հավելվածով (այսուհետ՝ Հավելված) սահմանված ցանկերը կազմելու նպատակով դատախազությունների ղեկավարների կողմից Հավելվածի 4-րդ կետով սահմանված տվյալներն ուղարկվում են ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (այսուհետ՝ Վարչություն)՝ առաջին կիսամյակի համար՝ մինչև հուլիսի 20-ը, տարվա համար՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը:

4. Հավելվածի 2-րդ կետով նախատեսված տվյալները պետք է ներառեն.

1) պետական և համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը և համայնքին վերջնական դատական ակտով վերականգնված գումարի չափը՝ կցելով հաշվետու ժամանակահատվածում օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատական ակտերի էլեկտրոնային տարբերակները,

2) քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման գումարի չափը՝ կցելով Վնասների վերականգնման միասնական հաշվին վճարված գումարների անդորրագրերի էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև տեղեկատվություն դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնված ակտիվների վերաբերյալ,

3) ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվը՝ կցելով վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին որոշումների էլեկտրոնային տարբերակները,

4) ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռների թիվը՝ կցելով դրանց էլեկտրոնային տարբերակները:

5. Վարչությունը Հավելվածի 2-րդ կետում թվարկված յուրաքանչյուր չափանիշի հիման վրա կազմում է առանձին ցանկ՝ ըստ դատախազությունների ցուցանիշներից բխող համապատասխան գործակիցների՝ դրանց հանրագումարը համադրելով դատախազության դատախազների (ներառյալ ստորաբաժանման ղեկավարի և ղեկավարի տեղակալների) թվի հետ:

6. Դատախազության դատախազների թիվը հաշվելիս հիմք է ընդունվում.

1) առաջին կիսամյակի համար՝ դատախազության դատախազների թիվը մարտի 31-ի դրությամբ,

2) տարվա համար՝ դատախազների թիվը հուլիսի 1-ի դրությամբ:

7. Հավելվածի 5-րդ կետով սահմանված 4 ցանկերը կազմելուց հետո Վարչությունը կազմում է նաև դատախազությունների վերջնական ցանկը՝ հիմք ընդունելով նշված 4 ցանկերում դատախազությունների զբաղեցրած տեղերի միջին թվաբանականը:

8. Վարչությունը Հավելվածի 5-րդ կետով նշված ցանկերը և դրանց հիման վրա՝ Հավելվածի 7-րդ կետով նախատեսված վերջնական ցանկը կազմում և զեկուցագրով ներկայացնում է ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջին կիսամյակի համար՝ մինչև հուլիս ամսվա վերջին աշխատանքային օրը, տարվա համար՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի վերջին աշխատանքային օրը:

Հավելված 2

ՀՀ գլխավոր դատախազի 2025
թվականի հուլիսի 21 -ի
թիվ «52-Ա» հրամանի

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Պետական և համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը և համայնքին վերջնական դատական ակտով վերականգնված **(Հավելված 1, 2-րդ կետ, 1-ին ենթակետ)** և քրեական վարույթներով, ինչպես նաև դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքին, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման **(Հավելված 1, 2-րդ կետ, 2-րդ ենթակետ)** յուրաքանչյուր 1.000.000 (մեկ միլիոն) դրամը հավասար է 1 (մեկ) գործակցի:

2. Սույն հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետի շրջանակում պետությանը կամ համայնքին վերադարձված անշարժ գույքի արժեքի հաշվարկի համար հիմք է ընդունվում տվյալ գույքի շուկայական արժեքը:

Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշված չլինելու դեպքում պետությանը կամ համայնքին վերադարձված կրթական, մշակութային, մարզական նշանակության օբյեկտների (մանկապարտեզ, դպրոց, մարզադաշտ, զբոսայգի, պուրակ, հրապարակ և այլ կրթական կամ սոցիալական նշանակության օբյեկտ) պարագայում հիմք է ընդունվում տվյալ գույքի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքի վեցապատիկը, իսկ այլ անշարժ գույքի դեպքում՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքի եռապատիկը:

3. Ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված յուրաքանչյուր քրեական վարույթը **(Հավելված 1, 2-րդ կետ, 3-րդ ենթակետ)** և ծանր հանցագործություններով օրինական ուժի մեջ մտած յուրաքանչյուր մեղադրական դատավճիռը **(Հավելված 1, 2-րդ կետ, 4-րդ ենթակետ)** հավասար է 1 (մեկ) գործակցի:

4. Առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված յուրաքանչյուր քրեական վարույթը **(Հավելված 1, 2-րդ կետ, 3-րդ ենթակետ)** և առանձնապես ծանր հանցագործություններով օրինական ուժի մեջ մտած յուրաքանչյուր մեղադրական դատավճիռը **(Հավելված 1, 2-րդ կետ, 4-րդ ենթակետ)** հավասար է 1,5 (մեկ ու կես) գործակցի: